

ՆԱՐ-ԴՈՍԸ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍՈՒՄ ԵՎ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Ուսումնասիրության առանցքում ունենալով Արշակ Չոպանյանի՝ Նար-Դոսի և նրա ստեղծագործության վերաբերյալ «Անահիտ» հանդեսի՝ 1930-ական թվականների տարբեր համարներում տեղ գտած անդրադարձումները՝ հողվածում առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում են անվանի գրականագետի գեղագիտական ու հասարակական հայացքները մեծանուն արձակագրի ստեղծագործության մասին: Նար-Դոսի գրականությանը թեև ծանոթ լինելով հեռվից՝ միջնորդաբար, այնուամենայնիվ Չոպանյանը նրբին ու հետաքրքիր դիտարկումներ է արել գրողի աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի և մտածողության համակարգի վերաբերյալ: Խնդիր է դրվել բացահայտել Չոպանյան գրականագետ-քննադատի գնահատման գեղագիտական չափանիշները՝ մատնանշելով թե՛ արժեքավոր դիտարկումները, թե՛ հակասական, վիճարկելի կամ անընդունելի մտքերն ու տեսակետները: Հողվածում կիրառվել են համեմատական, համադրական, մեկնաբանական, վերլուծական, ինչպես նաև նկարագրական մեթոդները:

Հողվածի առաջին մասում ընդարձակ տեղ է տրված Նար-Դոսի հետ հայտնի արվեստաբան Արամ Երեմյանի հարցազրույցին, որտեղ հեղինակի մեկնաբանությունները՝ սեփական կյանքի և ստեղծագործության վերաբերյալ, առավել ամբողջացնում են նրա՝ իբրև գրողի դիմանկարը:

Բանալի բառեր – Նար-Դոս, Ա. Չոպանյան, «Անահիտ» հանդես, մշակութային մերձեցում, հարցազրույց, կենսագրություն, գրական ազդեցություն, գեղարվեստական մեթոդ, հայ ռեալիստական վեպի սկզբնավորող

1890-ական թթ. պոլսահայ գրական միջավայրում ձևավորված, հետագայում փարիզաբնակ արևմտահայ անվանի մտավորական Արշակ Չոպանյանի գործունեության էական կողմերից մեկը եղել է հայ ժողովրդի երկու հատվածների մշակութային արժեքների գնահատումը, փոխադարձ տարածումն ու ծանոթացումը. «...Արշակ Չոպանյանը ուներ համահայ մտահոգություններ և գրականագետ-քննադատի ու արվեստաբանի իր ողջ գործունեության ընթացքում գրեթե հավասարապես իր աչքի տակ պահեց արևելահայ ու արևմտահայ, սփյուռքահայ ու սովետահայ գրական-հասարակական-քաղաքական կյանքի երևույթները»¹, - գրում է Վազգեն Գաբրիելյանը:

¹ Վ. Գաբրիելյան, Արշակ Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, № 1, էջ 33-34:

Ա. Չոպանյանը ուշագրավ և գիտական լուրջ ուսումնասիրություններ է գրել ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ, իսկ հետագայում՝ սփյուռքահայ ու խորհրդահայ գրողների և նրանց ստեղծագործությունների մասին՝ ազգային միասնական գրականության զարգացման համար միշտ կենսական համարելով նրանց մշակութային մերձեցման, միմյանց միջև մտավոր սերտ հարաբերություններ հաստատելու, իրար լրացնելու ձգտումը: Եվ եթե անգամ Չոպանյանի գրախոսություններից, նաև հոդվածներից ու գրվածքներից շատերը հեռու են տվյալ հեղինակի ստեղծագործության վերաբերյալ գրականագիտական-գեղագիտական հանրագումար լինելուց և ոչ էլ առաջին կամ ելակետային խոսքն են այս կամ այն գրողի կամ գործի վերաբերյալ, հաճախ էլ գուրկ են տեսական բանաձևումներից կամ իմաստասիրական բարդ դատողություններից, երբեմն ունեն թռուցիկ բնույթ՝ գրված ընդհանուր գնահատանքի մակարդակով, այնուհանդերձ դրանք ուշագրավ են նրանով, որ իրենց անպաճույճ արտաքինի տակ անպայմանորեն ուրվագծում են Չոպանյանի քննադատական խառնվածքի, գեղագիտական նախասիրությունների առանձին կողմեր, և դրանք մոռացության մատնելը կլինի անարդարացի:

Այդպես ահա հատուկ որևէ ուսումնասիրություն չգրելով՝ Նար-Դոսի և նրա ստեղծագործության մասին՝ Չոպանյանը, սակայն, իր խմբագրած «Անահիտ» հանդեսի 1930-ական թթ. տարբեր համարներում՝ իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկներում, հակիրճ բնութագրումներով անդրադարձել է նաև արձակագրին, արել մի շարք նրբին դիտարկումներ նրա ստեղծագործության որոշ առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք, սակայն, անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել: Ընդ որում անտեսել են ոչ միայն Նար-Դոսի գրականության ուսումնասիրողները, այլև Չոպանյանի գրականագիտական ու քննադատական ժառանգությամբ զբաղվողները:

Սակայն, մինչև Նար-Դոսին ուղղակիորեն անդրադառնալը Չոպանյանը «Անահիտի» 1930 թ. հինգերորդ համարում տպագրել է ամսագրի աշխատակից, գրող, գրականագետ, հայտնի արվեստաբան Արամ Երեմյանի գրույցը արձակագրի հետ՝ թվագրված 1929 թ. դեկտեմբերի 11-ով: Զրույցի շարադրանքի առաջին էջում տեղադրված է Նար-Դոսի լուսանկարը:

Գրողների ստեղծագործական արժեքը, կատարած հասարակական դերն ու գաղափարախոսությունը ավելի ճիշտ ընկալելու և լուսաբանելու տեսակետից մեծ կարևորություն տալով նրանց կենսագրության, հուշերի, նամակների, ինչպես նաև միջավայրի հետ կապված պատմական տվյալների հետազոտությանը՝ Ա. Երեմյանը գտնում է, որ շատ կարևոր են նաև հենց իրենց՝ հեղինակների մեկնաբանությունները՝ սեփական կյանքի և ստեղծագործության մասին: Իր գրույցը «տաղանդավոր վիպագիր» Նար-Դոսի հետ գնահատում է որպես այդ ուղ-

դությանը արված առաջին համեստ փորձերից մեկը²:

Նար-Դոսին ուղղված հարցումները և տված պատասխանները շոշափում են տարբեր հարցեր՝ ե՞րբ է գրողը մուտք գործել գրականություն, գրական ի՞նչ հոսանքներից է ազդեցություն կրել, ո՞ր հեղինակներ են մասնավորապես տպավորություն գործել նրա վրա, այս կամ այն գործի նյութը իրական կյանքի ց է առնված, թե՛ ոչ, և այլն:

Իր առաջին գործերը պատկերավոր համեմատելով նոր թևավորված թռչնի առաջին երգերի հետ՝ Նար-Դոսը փաստում է, որ նախ գրել է ռոտանավորներ, որոնցից մի քանիսը անգամ տպագրվել են: Հետագայում է միայն անցել արձակյին, սկզբից փոքր պատմվածքների, ապա վիպակների ու վեպերի:

Ինչ վերաբերում է գրական ազդեցությունների հարցին, պարզվում է՝ եթե ժամանակի՝ 1880-ական թվականների հայ գրականությունը նրան ոչինչ չի տվել, ինչպես ինքն է հիմնավորում, «ծայր աստիճան աղքատիկ» լինելու պատճառով, ապա փոխարենը նրա վրա «խոր եւ անջնջելի տպավորութիւն է գործել» ժամանակի ռուս գրականությունը՝ հանձինս Տուրգենևի, Դոստոևսկու, Գոնչարովի, Տոլստոյի, որոնց երկերից օգտվել է մասնավորապես իր գրվածքները հոգեբանորեն հիմնավորելու տեսակետից: Միակ բացառությունը մեզանում Նար-Դոսը համարում է Սունդուկյանի պիեսները, որոնց տպավորության տակ անգամ գրել է դրամատիկական մի գործ, որի ձեռագիրը, ինչպես ավստրալիացու փաստում է նա, կորել է: «Դարաշրջանի գրական գլխավոր ուղղութիւնը Բաֆֆիական ռոմանտիկ ուղղութիւնն էր, որն ինձ վրայ ոչ մի ազդեցութիւն չի գործել...,- ասում է նա և քիչ հետո շարունակում: Դրօշիս վրայ գրուած է եղել.- Հեռո՛ւ Բաֆֆիական հեքիաթաբանութիւններից (բնագրում՝ հեքիաթաբանութիւնները, որ անշուշտ վրիպակի հետևանք է- Վ. Ա.), իրական կեանքը՝ ինչպես որ կայ եւ մարդուս ներքինը»³:

Պաշտպանելով ռեալիզմի՝ կյանքը, մարդկային հարաբերություններն ու հոգեբանությունը ճշմարիտ և օբյեկտիվորեն պատկերելու ելակետը և ըստ էության կրկնելով իրապաշտության զոհրապայան սկզբունքը՝ «Կեանքն ինչպէս որ է», Նար-Դոսը, այնուամենայնիվ, ոչ միայն Բաֆֆու ստեղծագործության որակման հարցում, այլև 1880-ականների արևելահայ գրականությանը տված գնահատականում ընկել է չափազանցության մեջ: Անգամ առերևույթ ընկալմամբ նկատելի է նրա ծայրահեղությունը: Չէ՞ որ հենց նույն 1880-ականներին միայն Պ. Պոռոշյանի «Հացի խնդիրը» (1880), «Ցեցերը» (1888), «Բղդեն» (1889) զարգացրին հայ սոցիալական վեպը և նոր խոսք էին մեր գրականության մեջ: Չմոռանանք նաև Ռ. Պատկանյանի նորնախիջևանյան բարբառով գրված

² Տե՛ս Ա. Երևմեան, Զրոյց վիպագիր Նար Դոսի հետ, «Անահիտ», Փարիզ, 1930, թիւ 5, էջ 42:

³ Նույն տեղում, էջ 42-43:

պատմվածքները, որոնք ուղղակիորեն կապված էին տվյալ իրականությանը, արտացոլում էին իրողություններ, «ուր,- ինչպես նկատում է գրականագետ Ստ. Թովչյանը,- չեն նկատվում առանձնապես գրողի երևակայության, ստեղծագործական հնարքների, «գրչի» հետքերը»⁴:

Ինչպես գիտենք, Նար-Ռոսը իր ստեղծագործական տարերքով ու պաթոսով անտարակույս ռեալիստ է: Բայց ահա այդ ռեալիստ գրողը, հանդես գալով քննադատի դերի մեջ, լավ հասկանալով գրական ուղղությունների տարբերությունները, Բաֆֆուն գնահատելիս, ինչպես տեսանք, նրան հեզնաբար անվանում է «հեքիաթաբան»: Ռեալիստ Նար-Ռոսին, իհարկե, չէին կարող գրավել Բաֆֆու մանավանդ քաղաքական-ծրագրային վեպերի («Կայծեր», «Խենթ», «Ջալալեդդին») արկածային հանգույցները, հոգեբանական անհամոզիչ երանգները, ռոմանտիկական բուռն ու անզուսպ երևակայությունը: Անշուշտ, նրան՝ որպես «օբյեկտիվիստ գրողի» (Վազգեն Սաֆարյանի որակումն է)⁵, գրականության մեջ չէր կարող հանդուրժելի լինել նաև որևէ կանխակալ միտում կամ քարոզչական նպատակ⁶:

Սակայն Նար-Ռոսը անտեսել է մի շատ կարևոր հանգամանք. այն, որ գեղարվեստական ռճի խնդրին Բաֆֆին նայում էր հասարակական դիրքից՝ նկատի ունենալով և կարևորելով օգտակարության հարցը. «- Բաֆֆին,- ինչպես գրում է անվանի գրականագետ Հր. Թամրազյանը,- երբեք չի անտեսել գեղարվեստական հատկանիշների կարևորությունը, սակայն նրա մոտ դրանք իմաստավորվել են միայն և միայն ազգային առաջընթացի և հասարակական շահերի տեսանկյունից»⁷:

Մեծանուն վիպասանը, ասես տարիների հեռվից՝ շուրջ հիսուն տարի առաջ՝ 1883 թ., մարգարեաբար կռահելով նաև ապագա, իր ստեղծագործության ռոմանտիկական միտվածությունն ու արկածայնությունը անընդունելի համարող քննադատի իրեն ուղղված հնարավոր մեղադրանքները, պատասխան է տվել ոչ միայն իր օրերի «կրիտիկոսին»՝ Հայկունուն (Հովակիմ Գեղամյան), այլև նրան. «...հիսուն տարիներից հետո,- գրում է Բաֆֆին,- եթե մի կրիտիկոս հանձն կառնե քննել Կայծերը կամ Բաֆֆիի մյուս վեպերը, նա միշտ սխալանքների մեջ կընկներ, եթե ի նկատի չէր առնի ժամանակի պատմությունը և այն բոլոր

⁴ Ռ. Պատկանյան, Երկեր, Եր., 1980, էջ 16:

⁵ Տե՛ս Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը, Եր., 2001, էջ 178:

⁶ Ի դեպ, ինչպես գրականության հասարակական ու գեղագիտական կոչման վերաբերյալ իր պատկերացումներում, այնպես էլ Բաֆֆու գրականության մասին գնահատականներում Նար-Ռոսը ունեցել է ակնհայտ հակասություններ. մի կողմից նա պահանջել է իդեալներ և հայ ռոմանտիկ հեղինակների հետևողությամբ սահմանել նրանց գործունեության ոլորտները, մյուս կողմից համոզված պնդել է, «որ գրողը պետք է աշխատի չերևալ իր երկերում, չպետք է զգացնել տա իր գաղափարները, մի բան, որ ռոմանտիզմի հիմնական էությունն է». այդ մասին հանգամանորեն տե՛ս Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 177-178, 189, նաև՝ Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը (Դասախոսություններ 1), Եր., 2022, էջ 186-187:

⁷ Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, Գիրք Գ, Եր., 1992, էջ 403:

հանգամանքներն ու շարժառիթները, որ պատճառ եղան այդ վեպերի ստեղծվելուն»⁸:

Եվ իսկապես, Նար-Դոսն ընկել է որոշ «սխալանքի» մեջ: Բայց և այնպես, կարծում ենք, այդ սուբյեկտիվիզմը ուներ նաև ինչ-որ հասկանալի հիմքեր և թերևս կապված էր հայ վիպասանության առաջընթացի հետ: Մասնավորապես, ռուս գրականության անցումը արձերհին և գրական զարգացումներին քաջաձանոթ Նար-Դոսը, համոզված ենք, ձգտում էր վերջինիս օրինակով ընդլայնել հայ վեպի ընդգրկումը և մեծացնել տեսակարար կշիռը՝ հատկապես բարձր գնահատելով իր դերը վիպասանության զարգացման շղթայի մեջ:

Արամ Երեմյանի հարցումներին, թե «Աննա Սարոյան», «Տանտիրոջս աղջիկը» վեպերի նյութը իրական կյանքի՞ց է առնված, Նար-Դոսը տալիս է դրական պատասխան՝ յուրաքանչյուրի կապակցությամբ հակիրճ բացատրելով, թե ինչ նպատակ է հետապնդել և ինչ է ցանկացել ցույց տալ: Իսկ Երեմյանի՝ մասնավորապես «Աննա Սարոյանի» վերաբերյալ Լեոյի տված կարծիքի հարցում՝ ճիշտ է արդյոք պատմաբան-գրականագետը, երբ վեպի գեղարվեստական հաջողության երաշխիքը համարել է սոսկ դրության արձանագրումը՝ առանց քննության առնելու նրա պատճառները, «առանց երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ մտնելու»⁹, Նար-Դոսը տալիս է հետևյալ պատասխանը. «Լէօն ճիշդ է ասում, որ ես բաւականացել եմ միայն դրութիւնն արձանագրելով. բայց եթէ նա գտնում է որ ես չեմ բացատրել պատճառները, չեմ մտել երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ, ապա կ'ասեմ, որ այդ դէպքում ես կը նմանէի այն նկարչին, որ քաղաղ նկարելով, տակը գրէր. «Սա քաղաղ է»»¹⁰: Այս դեպքում արդար է Նար-Դոսի հեզմանքը: Լեոն, ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Նար-Դոսի հիշյալ երկու վեպերը, նկատել է. «...Նա (Նար-Դոսը- Վ. Ա.) միայն պատմում է իրողութիւնը: Նրա հերոսները կազմ ու պատրաստ են դուրս գալիս ընթերցողի առաջ: Եւ այդ պատճառով պ. Նար-Դոսի այս երկու գրուածքները պէտք է պարզապէս կէանքի տեսարաններ անուանել»¹¹:

Քանի որ այս դեպքում մեր խնդրո առարկան հատկապես «Աննա Սարոյան» նամակագրական երկն է, նկատենք, որ «ոչ շատ հաջողված քննադատ» Լեոն (որակումը Վազգեն Սաֆարյանինն է)¹² շրջանցել է նրա ժանրային-ոճական առանձնահատկությունները՝ մոռանալով, որ այդ ժանրում դժվար է ստեղծել վիպաշխարհ. այստեղ բախումները

⁸ Բաֆֆի, ԵԺ, «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը», հ. 10, Եր., 1964, էջ 125-126:

⁹ Լեոյի կարծիքի բնագիրը ամբողջապես տե՛ս Լէօ, Ռուսահայոց գրականութիւնը, սկզբից մինչեւ մեր օրերը. Բանաստեղծութիւն.- թատերգութիւն, վիպագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 370-371:

¹⁰ Ա. Երեմյան, նշվ. աշխ., էջ 43:

¹¹ Լէօ, նշվ. աշխ., էջ 370-371:

¹² Տե՛ս Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը (Դասախոսություններ 1), էջ 83:

տեղի են ունենում մարդու կամ հերոսի հոգեբանության մեջ¹³: Եվ հետո՝ նամականու ձևը թույլ չի տալիս միջանկյալ նկարագրություններ, մանրամասներ, հանգամանալից բացատրություններ. այն պահանջում է հնարավորինս սեղմ և ընդգծված ցույց տալ հանգուցային պահերը¹⁴:

«Սպանված աղավնի» վեպի՝ իր ստեղծագործական գլուխգործոցը լինելու հարցի պատասխանը թողնելով քննադատներին ու ընթերցողներին՝ Նար-Դոսը, սակայն, վերջինիս թեման գտնում է «գերիրական, եւ մշտական-այժմեական», քանի գոյություն կունենա երկու սեռերի հարաբերության խնդիրը, որը ավելի քան երբևէ, ինչպես նկատում է արձակագիրը, «ուժեղ թափով ծեծում է ռուս յետ-հոկտեմբերեան գրականութեան մեջ...»¹⁵:

Չաջորդ հարցերը վերաբերում են «Մահը» և «Պայքար» վեպերին, դրանցում շոշափված խնդիրներին: Եթե առաջինում, ինչպես հեղինակն է փաստում, շոշափել է կյանքի և մահվան պրոբլեմը, ապա երկրորդում պատկերել է ժամանակի հայ հասարակական երկու գլխավոր հոսանքների՝ պահպանողականների, որին, ի դեպ, ինքը անգիջում հարել էր¹⁶, և լիբերալ-ազատամիտների («նոր-դարական եւ մշակական»-Նար-Դոս) բախումը:

Նար-Դոսը իր նախաձեռնությամբ՝ չսպասելով հարցի, խոսում է նաև «Մեր թաղը» նովելաշարի մասին, ասում, որ դրանում ընդգրկված բոլոր պատմվածքների նյութը առնված է իրական կյանքից գրված պատանեկան տարիների անմիջական տպավորության տակ: Իսկ սովորաբար իր գրվածքներում հասարակական ո՞ր խավերի կյանքն է պատկերել, ո՞ր միջավայրն է գլխավորապես նյութ ունեցել, Նար-Դոսը պատասխանում է. «Իմ գրվածքներում ես ուզեցել եմ պատկերել առհասարակ մեծ քաղաքի խուլ թաղերում իրենց ողորմելի կեանքը քարշ տող խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կեանքը, այդ դասակարգի մեջ տիրող մտաւոր թանձր խաւարը, նախապաշարումները, մանաւանդ կնոջ սոսկալի վիճակը տղամարդու ձեռքին. այնուհետեւ նոյն քաղաքի մեշչանական (քաղքենիական- Վ. Ա.) եւ մանր-բուրժուական ընտանիքի կեանքը, մեր հասարակական հոսանքների բաղխումները, մեր ինտելիգենցիայի, զանազան ներկայացուցիչների տիպերը»¹⁷:

Վերջին հարցին, թե որոնք են իր կյանքի «բնորոշ գծերը», Նար-Դոսը իրեն հատուկ համեստությամբ¹⁸ պատասխանում է, որ ոչինչ իր կենսագրության մեջ հետաքրքիր չկա, և շատ հակիրճ, մի քանի բառով ներկայացնելով իր կյանքը՝ ավարտում է գրույցը:

¹³ Տե՛ս **Տ. Մերջանյան**, Կյանքի և մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում, Եր., 2022, էջ 104:

¹⁴ Տե՛ս «Հայ վեպի պատմություն (19-րդ դար)», Եր., 2005, էջ 395:

¹⁵ **Ա. Երեմեան**, նշվ. աշխ., էջ 43:

¹⁶ Տե՛ս **Վ. Սաֆարյան**, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 175:

¹⁷ **Ա. Երեմեան**, նշվ. աշխ., էջ 44:

¹⁸ Նար-Դոսի խառնվածքի ու բնավորության մասին տե՛ս **Վ. Սաֆարյան**, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 174-177:

Արամ Երեմյանն իր գրույց-հոդվածը եզրափակում է Նար-Դոսի արտաքինի նկարագրությամբ, որի պատկերավոր գծագրության մեջ բացահայտում է մեծ գրողի բնավորության առանձնահատկությունները՝ եռանդը, համառ աշխատասիրությունը, իմաստությունը: Ակնառու է գրականագետի խորին ակնածանքը Նար-Դոսի նկատմամբ:

«Անահիտի» նույն թվականի՝ 1930-ի հաջորդ համարում՝ «Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից» խորագիրը կրող բաժնում, որտեղ պարբերաբար տեղեկություններ էին տրվում Խորհ. Հայաստանում տեղի ունեցող տնտեսական վերափոխումների, հայաստանյան մշակութային կյանքի, նորատիպ հրատարակությունների ու ստեղծագործությունների և այլնի վերաբերյալ, թղթակիցը հայտնում է, որ Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական բաժանմունքը մարտի 20-ին Տպագրիչների ակումբում կազմակերպել է գրական դատ Նար-Դոսի «Մպանված աղավինի» վեպի շուրջ, որը առաջ է բերել մեծ հետաքրքրություն¹⁹: Իսկ հանդեսի՝ համանուն խորագիրը կրող 1931 թ. թիվ 1-2 միացյալ համարում փոխանցվում է, որ Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական բաժանմունքը ապրիլի 23-ին կազմակերպել է զեկուցում՝ նվիրված Նար-Դոսի ստեղծագործություններին: Ներկաներից շատերը իրենց համակրանքի և գնահատության խոսքն են հնչեցրել գրողի հասցեին: «Խորհրդային Հայաստան» լրագրից առնված տեղեկությունների միջնորդությամբ տեղեկացվում է նաև, որ նույն թվականի հունիսի 14-ին Ռուսթավելու անվան թատրոնի համերգային դահլիճում տեղի է ունեցել Նար-Դոսի 45-ամյա գործունեության հորելյանը, որտեղ հանդիսության կազմակերպիչ, Վրաստանի հանրային կրթության գործավար Կվիրակաձեն իր ոգևորիչ ճառում հաղորդել է, որ Վրաստանի լուսժողովատը որոշել է Նար-Դոսին տալ Վաստակավոր գրողի կոչում՝ նրան ապահովելով թոշակով, և Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղի յոթնամյա դպրոցը վերանվանել նրա անունով: Բազմաթիվ ողջունողներից, նրանց թվում նաև Դ. Դեմիրճյանից և Ալազանից հետո՝ հորելյանական նիստի վերջում, հանդես է եկել «ալեգարդ յոբելեարը»՝ շնորհակալական ջերմ հարգանք հայտնելով իր գրական վաստակը գնահատողներին և խորհրդային իշխանությանը՝ գրողներին «գուրգուրանքի» արժանացնելու, քաջալերելու և գնահատելու համար: Հաղորդվում է նաև, որ Վրաստանի կառավարությունը որոշել է Նար-Դոսին նշանակել կենսաթոշակ, վրացերենով տպագրել նրա «Մեր թաղը» ժողովածուն և «Մպանված աղավինի» վիպակը, իսկ Հայաստանի պետհրատը՝ նրա գրվածքների լիակատար ժողովածուն: Ադրբեջանի պետհրատը նույնպես հրատարակում է նրա լավագույն երկերը, իսկ Ռուսաստանի պետհրատը ռուսերենով արդեն լույս է ընծայել «Մահը» վեպը²⁰:

¹⁹ Տե՛ս «Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից», «Անահիտ», Փարիզ, 1930, թիվ 6, էջ 126:

²⁰ Տե՛ս **Ա. Զօպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիվ 1-2, էջ 187-188:

«Անահիտի» նույն՝ 1931 թ. մայիս-օգոստոսյան համարում՝ իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկում, կովկասյան թղթակցի միջնորդությամբ Չոպանյանն է նաև հաճույքով տեղեկացնում, որ և՛ Երևանում, և՛ Թիֆլիսում տոնվել են Նար-Դոսի 45-ամյա և Դեմիրճյանի 35-ամյա գրական գործունեության հոբելյանները: Չոպանյանը դրանք գնահատում է որպես «բերկրառիթ», «խորհրդային ուժի մին պատուաբեր» երևույթներ, որոնք նաև վկայում են ամբողջ պետության և ոչ միայն հայ, այլև «դրացի ու դաշնակից ժողովուրդներու ե... ազգերու եղբայրական» մեծարանքը, «միահամուռ յարգանքն» ու «սիրոյ արտայայտութիւնը»՝ «ցեղին մտաւոր ու գեղարուեստական գործին վաստակաւորներուն հանդէպ»²¹: Սակայն նրբազգաց մտավորականը նաև ցավով փաստում է, որ նման մեծ գրագետների հոբելյաններին, «որ ամբողջ Հայութեան մտաւոր կեանքի սիւներէն են», արտասահմանի հայ գաղութներից որևէ մեկին հնարավորություն չի տրվել մասնակցելու²²:

Երկու տաղանդավոր արձակագիրներին համատեղ գնահատելով և հաճախ զուգահեռներ տանելով՝ Չոպանյանը Նար-Դոսի կապակցությամբ մասնավորապես է, որ նա «հայ իրապաշտ վեպին մեծագոյն վարպետն է Արեւելահայոց մէջ», և անմիջապես նկատում՝ «Շիրվանզադէն յետոյ»²³: Ձեռքի տակ չունենալով Նար-Դոսի որևէ գիրք կամ ստեղծագործություն՝ Չոպանյանը նրա մասին տալիս է ավելի շատ ընդհանրական գնահատականներ՝ ափսոսանքով փաստելով, որ գրողի գործերը Կովկասից դուրս շատ քիչ են կարդացված, իսկ ավելի հաճախ՝ ծանոթ միայն անունով: Համենայնդեպս՝ իր ընթերցողին խմբագիրը տեղեկացնում է, որ Նար-Դոսը, ինչպես և Դ. Դեմիրճյանը, որ արդեն Առաջին աշխարհամարտից առաջ դրսևորել և ապացուցել էին իրենց տաղանդը, «թէւ ոչ համայնավար, ... առաջին բոլորէն բարեկամ եւ համակրող ցոյց տուած են նոր րէժիմին»: Գալով Նար-Դոսի ստեղծագործության բովանդակությանը՝ Չոպանյանը գրում է. «Նար-Դոսի վեպերը արդեն կծու քննադատութիւն մըն էին պուրժուական ընկերութեան, պատկերացում մը մարդկային անարդարութեանց, կեղեքմանց, շահագործմանց»²⁴:

Որպես առավելություն Չոպանյանը նկատում է, որ երկու հեղինակներն էլ, իրենց աշխարհայացքը զուտ գրական գործերի մեջ արտահայտելով, մնացել են ճշմարիտ արվեստագետներ՝ հեռու կուսակցական «բռնագրօսիկ եւ անկենդան» քարոզներից: Չոպանյանի գեղա-

²¹ Նույն տեղում, էջ 162: Այդ հոբելյանների առիթով Ա. Չոպանյանը նաև արժանի է հատուցում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների մասնակցության երևույթին. տե՛ս նաև՝ **Կ. Դալլաքյան**, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 423:

²² Տե՛ս **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 162:

²³ Գրեթէ նույն միտքը, սակայն այլ ձևակերպմամբ ու բառերով արտահայտել է Հր. Թամրազյանը՝ գրելով. «Մեզանում ոչ ոք այդպես խորը չի ըմբռնել ռեալիզմի բնույթը... որքան Շիրվանզադէն». **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 506:

²⁴ **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 162:

գիտության մեջ այս ըմբռնումը նորություն չէր. նա միշտ էլ պահանջ էր դնում արվեստի մեջ քողարկել հեղինակային միտումնավորությունն ու ջատագովությունը, գաղափարական բացահայտ ու անսքող քարոզը²⁵: «Ազգին շահը կուսակցության շահին վեր դնել միշտ»²⁶, - այս էր Չոպանյանի նշանաբանը: «Ճշմարիտ գրագետն ու բանաստեղծը, կոչուի Թումանեան կամ Չարենց, Թեքեան կամ Սիամանթո, Ահարոնեան կամ Իսահակեան, Բաֆֆի կամ Ալիշան, իրենց բուն գրական գործերուն մեջ՝ ամեն կուսակցությունե վեր կը բարձրանան, կը դառնան ներկայացուցիչները ազգին հոգւոյն ու հանճարին: Ասիկա չհասկցողը՝ բուն գրական քննադատութեան ու նաեւ ճշմարիտ կուսակցական գործունէութեան՝ անգիտակ կը մնայ»²⁷, - համոզված գրում է գրականագետը: Եվ վերջապէս, չէ՞ որ, ինչպէս իրավացիորեն նկատում է քննադատը, «տաղանդը, երբ կայ, ու եւ վարդապետութեան կեղերը կը ճեղքէ ու իր ծաղիկները դուրս կը հանէ, իրականացնելով գրականութեան եւ արուեստի բուն նպատակը, Գեղեցիկը»²⁸:

Վերջին անգամ Ա. Չոպանյանը Նար-Դոսին անդրադարձավ նրա մահվան կապակցությամբ 1933 թ.: Իր խոսքի մեկնարկում գնահատելով Նար-Դոսին՝ ասես նրա մեծությունը ընդգծելու համար դարձյալ համեմատում է Շիրվանզադէի հետ, սակայն այս անգամ նրանց դնում է նույն աստիճանի վրա. «Նար-Դոս (Միքայէլ Յովհաննէսեան) հայ իրապաշտ վեպին ռահվիրան եղած է մեր մեջ, Շիրվանզադէի հետ, եւ իր գործերու շարքով այդ գրական սեռին մեջ մեծ վարպետ մը հանդիսացած է,- գրում է նա՝ քիչ ներքևում շարունակելով:- Նար-Դոս եւ Շիրվանզադէ, մտցուցին վեպի մեջ այդ իրապաշտ ուղղութիւնը, գոր Մունդուկեան, առաջինը հայ իրապաշտներուն, մտցուցած էր թատերգութեան մեջ»²⁹:

Փոյթ չէ, որ ինչպէս նախկինում³⁰, այնպէս էլ ընդամենը մի քանի տարի առաջ արևելահայ գրականության մեջ ռեալիստական վեպի սկզբնավորողի՝ իր իսկ կողմից Շիրվանզադէին շնորհված բացարձակ առաջնորդությունը Չոպանյանը առնում է նրանից և այն հավասարապէս բաշխում վերջինիս և Նար-Դոսի միջև: Առավել զարմանալին այն է, որ քիչ հետո էլ Նար-Դոսին գնահատում է «աւելի գուտ իրապաշտ», քան Շիրվանզադէն է, «որուն աւելի ընդարձակ ու բազմատարր գործին մեջ,- ինչպէս գրում է,- քիչ մը ռոմանթիզմ կայ խառնուած»³¹: Եվ վերջին

²⁵ Տե՛ս նաև Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 453-454:

²⁶ Ա. Չոպանեան, Մեր երեկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 8:

²⁷ Ա. Չոպանեան, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մեջ, «Անահիտ», Փարիզ, 1939, թիւ 1-2, էջ 91:

²⁸ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, թիւ 5, էջ 107:

²⁹ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 60:

³⁰ Դեռ 1909 թ. «Անահիտի» առաջին շրջանում, Ալ. Շիրվանզադէին նվիրված հոդվածում Ա. Չոպանյանը գրում է. «Շիրվանզադէ մեր ամենէն իսկական «իրապաշտն» է», Ա. Չոպանեան, Շիրվանզադէ, «Անահիտ», Փարիզ, 1909, թիւ 7-8, էջ 146:

³¹ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 60:

հանգամանքը Շիրվանզադեի համար դիտարկելով որպես առավելություն («ատոր համար՝ աւելի լայն ու այլազան, աւելի հրապուրիչ է ան») ասես մի տեսակ շփոթություն է ստեղծում: Եվ քանի որ քննադատը հետո չի պարզում իր միտքը, լռում է, և բացակայում է բացատրությունը, ուստի դժվար է գուշակել, թե ինչ նոր բան կարող էր տեսած լինել նա Շիրվանզադեի ոճի և եղանակի մեջ՝ նման գնահատական տալու համար: Սակայն շուտով գալիս է ասվածի սրբագրումը. 1935 թ. Շիրվանզադեի մահվան կապակցությամբ ասես արդեն վերջավորված օրինականացում է իր նախկին տեսակետը. «...ան (Շիրվանզադե- Վ. Ա.) արևելահայ գրականութեան մեջ մտցուց իրապաշտ վեպը եւ այդ գրական սեռին մեջ մեծագոյն վարպետը հանդիսացաւ...»³²:

Վերադառնանք Նար-Դոսին: Համառոտ ակնարկ տալով գրողի կենսագրության վերաբերյալ ու ներկայացնելով հասարակական միջավայրը՝ Չոպանյանը, հավատարիմ իր որդեգրած քննադատական սկզբունքներին³³, Նար-Դոսի նախընտրած գեղարվեստական նյութի տարածությունն ու թեմաները պայմանավորում է ոչ միայն նրա ապրած կյանքով ու շրջապատով, այլև, որ շատ կարևոր է, անհատական խառնվածքով՝ դրանով չանտեսելով գրողի ներքին տարերքի դերը նրա ստեղծագործության մեջ. «...Նար-Դոս իր խառնուածքէն ու իր կեանքին ու շրջապատին իսկ պայմաններէն մղուած է արտադրել գործեր ուր մարդկային կեանքը կը պատկերացուի անոր անարդարութիւններէն, անհաւասարութիւններէն, անբարոյացուցիչ տգեղութիւններէն զգուած, ընդվզած, եսամոլ կեղեքիչներու դէմ ասելութեամբ լի, շահագործուող ու զոհուող տկարներուն հանդէպ արգահատանքով տոգորուն մտայնութեամբ մը... Իր գործերուն մեջ, հարուստ ջոջը եւ մամոնայի երկրպագու կղերական դեկավարը ժխտական գոյներով ներկայացուած են...»³⁴:

Այնուհետև Չոպանյանը ցույց է տալիս խոշոր ռեալիստ գրողի արվեստի սոցիալական միտվածությունը, որը, ինչպես ինքն է վկայում, «չ'արտայայտուի յեղափոխական տեսութիւններով ու մարդկային ընկերութեան անարդարութեանց դէմ կռուող հերոսներու պատկերացումներով...»³⁵: Նար-Դոսի գործերը, ինչպես համոզված է Չոպանյանը, օբյեկտիվորեն ներկայացնելով ժամանակի հասարակական հարաբերությունները, իրենց թողած տպավորությամբ ընթերցողի մեջ սերմանել են «ընդվզման ու վերանորոգիչ պայքարի տրամադրութիւն», ճիշտ այնպես, ինչպես Սունդուկյանի և Շիրվանզադեի «ընկերական յեղա-

³² Ա. Չոպանեան, Շիրվանզադե, «Անահիտ», Փարիզ, 1935, թիւ 6, էջ 44:

³³ Ա. Չոպանյանի տեսական-քննադատական սկզբունքների մասին տե՛ս Ա. Չոպանեան, Ուսումնասիրութեան մը շուրջը, «Ծաղիկ», Վ. Պոլիս, Ազգային, Գրական եւ Քաղաքական կիսամեայ հանդես, Նոր շրջան, թիւ 7, 20 մայիս 1895, էջ 261: Նաև՝ Ժ. Քալանթարյան, Հայ գրականագիտության պատմություն, Եր., 1986, էջ 377-392:

³⁴ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», 1933, թիւ 1-2, էջ 60:

³⁵ Նույն տեղում:

փոխութիւն պատրաստող գործերը»³⁶: Նման ձևակերպմամբ, կարծում ենք, գրականագետը շատ է խտացնում գույները և հեռանում ճշմարտությունից³⁷: Անշուշտ չի կարելի ժխտել թե՛ Սունդուկյանի, թե՛ Շիրվանզադեի և թե՛ Նար-Ռոսի աշխարհայացքի դասակարգային բովանդակությունը, նրանց երկերի սոցիալական հագեցվածությունը, իրականության մերկացման քննադատական ուղղությունն ու դատապարտումը, այն, որ գրողները անտարբեր չեն եղել կյանքի անցուղարձին, հասարակական հարաբերություններին, սակայն դա դեռ չի նշանակում, թե նրանք իրենց ստեղծագործություններով նախապատրաստել են սոցիալական հեղափոխություն: Ասվածը ենթակա է խիստ վերապահության, անգամ՝ մերժման: Այլ բան, որ նրանք, պատկերելով իրենց ժամանակի սոցիալական միջավայրը, հասել են հասարակական կյանքի թերությունների և հակասությունների գեղարվեստական ամբողջացմանը, և այդ թերությունները ցանկանալով տեսնել վերացած՝ հասարակության վերափոխման և բարեփոխման մեջ ավելի հաճախ դրել են անհատի խնդիրը կամ նրա մաքրագործման պահանջը, գաղափարական բողոքը, որը եթե անգամ վերաճել է սոցիալական դժգոհության, ապա չի հասել դասակարգային ուղիղ կռվի կամ ըմբոստության նպատակի:

Գալով Նար-Ռոսի կյանքի վերջին շրջանին՝ Չոպանյանը վերստին վկայում է, որ գրողը համակրանքով է ընդունել խորհրդային իշխանությունը, առանց համայնավար դառնալու՝ դարձել «նոր րեժիմին» բարեկամ ուղեկիցը, հանգամանք, որ, ինչպես գրականագետն է բացատրում, շատ առումներով պայմանավորված էր նաև նրա գործերի հիմնական բնույթով: Մի քանի տողով էլ անդրադառնալով գրողի ստեղծագործական կյանքի վերջին շրջանին, հրատարակած նոր գործերին ու անավարտ մնացած հղացումներին՝ դարձյալ նկատում է, որ Նար-Ռոսի գրական արտադրությունները գրեթե անձանոթ են արևմտահայությանը: Եվ ակնկալելով, որ գեթ մահվանից հետո նրա գործերի նոր հրատարակությունը կտարածվի արտասահմանում և կգրավի նաև արևմտահայ ընթերցողին՝ ավարտում է խոսքը իր որակմամբ «խնամոտ, դժուարահաճ, կատարելասէր գրող,- ժուժկալ, ճշգրիտ ու յստակ ոճով նրբավրձին իրապաշտ» հեղինակի մասին³⁸:

ВАЧАГАН АВАГЯН – Нар-Дос в журнале «Анаид» и в оценках Аршака Чобаняна. – В данной статье, посвященной отзывам Аршака Чобаняна о Нар-Досе и его творчестве в разных номерах журнала «Анаид» за 1930-е годы, впервые подробно представлены эстетические и общественные взгляды известного литературоведа о творчестве знаменитого романиста. Будучи знакомым с литера-

³⁶ Նույն տեղում:

³⁷ Ի դեպ, Կ. Դավլաբյանը Ա. Չոպանյանին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ առանց որևէ հիմնավորման լուր ընդառաջ է եկել Ա. Չոպանյանի այս տեսակետին բավարարվելով սոսկ նրա ասածի կրկնությամբ, տե՛ս Կ. Դավլաբյան, նշվ. աշխ., էջ 440:

³⁸ Տե՛ս Ա. Չոպանյան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 61:

турой Нар-Доса на расстоянии, посредническим путем, Чобанян сделал тонкие и интересные наблюдения о мировоззрении, художественном методе и системе мышления писателя. Задача автора статьи - выявить эстетические стандарты оценки Чобаняна-литературоведа, указав как на ценные наблюдения, так и на спорные, дискуссионные или неприемлемые мысли и взгляды.

В первой части статьи значительное место отведено интервью известного искусствоведа Арама Еремяна с Нар-Досом, где комментарии автора о собственной жизни и творчестве дополняют его портрет как писателя.

Ключевые слова: *Нар-Дос, Ариак Чобанян, журнал «Анаит», культурное сближение, интервью, биография, литературное влияние, художественный метод, родоначальник армянского реалистического романа*

VACHAGAN AVAGYAN – *Nar-Dos in "Anahid" Journal and in Archag Tchobanian's Evaluations.* – Current article, focusing on Archag Tchobanian's references on Nar-Dos and his work in different issues of "Anahid" journal in 1930s, the aesthetic and public views of the famous literary critic on the work of the famous novelist are thoroughly presented for the first time. Although familiar with Nar-Dos's literature from a distance, through mediation, Tchobanian made subtle and interesting observations about the writer's worldview, artistic method and thinking system. The task of article's author is to reveal the aesthetic standards of evaluation of Tchobanian the literary critic, pointing out both valuable observations and controversial, disputable or unacceptable thoughts and views.

In the first part of the article, an extensive space is given to the famous art critic Aram Yeremyan's interview with Nar-Dos, where the author's comments on his own life and work complete his portrait as a writer.

Key words: *Nar-Dos, Archag Tchobanian, "Anahid" journal, cultural rapprochement, interview, biography, literary influence, artistic method, originator of the Armenian realist novel*